տաճարս լուսոյ գիտել զուսումնարանս ժողովրդեան, համարել զնոսա նախագրունս եկեղեցւոյ, քաջալերք տալ նոցա և հովանի պաշտպանութեան ածել զնոքօք. մեզ այս մեծ հանդէս է. զի խոնարհ սպասարկուքս ի տաճարիս, մատաղերամ մանկամբքս հանդերձ՝ արժանի եղաք օրհնաբեր այցելութեան մեծի խնամակալիդ Հայաստանեայց եկեղեցւոյ։

Ցիշատակ աւուրս անջնջելի դրոշմեսցի ի սիրտս մեր և ի հոգիս և յարձանագիրս ազգային պատմութեան։

Ընկալարուք Վեհափառ Հայր, զխոնարհական ողջոյնս մեր և զհամբոյր որդիական՝ աջոյդ սրբոյ։ Օրհնութիւն Օծեալ Ցեառնդ ընդ երկար ծաւալեսցի ի զաւակունս Հայաստանեայց եկեղեցւոյ, որք մաղթենն ջերմագին. «կեցցէ քաջ Հովուապետ հայոցն հօտիս և Վեհափառ Հայրս մեր՝ Ցէր Մակար, կեցցէ ամո յամայր»։

Վերջին խօսքն արտասանելուց յետոյ բոլոր ունկնդիր հասարակութիւնն կոչեց հրճուագին՝ «Կեցցէ Վեհափառ Հայրապետ»։։

Նորին Օծութիւնն շնորհ արաւ իւր մօտ առնելու ճառն, օրհնեց ճառախօսին և ապա ասաց ներկայ եղողներին, «որ արդէն իսկ եպիսկոպոսութիւնն մի նահատակութիւն է, որ այդ վսեմ պաշտօնն իւր վերայ կրողն յանձն է առնում ուխտիւ իւր հօտի բարեաց համար. բայց և առաւել մեծ նահատակութիւն է Կաթուղիկոսական ծանր կոչումն, զոր ինքն պարտք է համարում տանել ամենայն անձնազոհութեամբ. փոխարէնն մխիթարուելով միայն իւր ազգի անկեղծ սիրովն»։ Նորին Վեհափառութեան այս ազդու և խորհրդաւոր խօսքերն վերջացան «կեցցէ»ների անընդհատ աղաղակով, որ դուրսը և ներսը թնդացրին։

Այսպէս վերջացաւ դպրոցական հանդէսը, և Նորին Օծութիւնը գոհութեամբ գնաց դպրոցից Վեհարանը, ուր Շամախւոյ Առաջնորդը նուիրեց Նորին Օծութեան մի բարեմաղթութեան ուղերձ ի շնորհաւորութիւն այցելութեան Նորին Սրբութեան, որոյ գլխատառերը կազմում են «Մեսրոբայ է» բառս, և է այս հետեւեալն։